Միկրոձեռնարկատիրության հատուկ հարկային համակարգ անհատ ձեռնարկատեր (ԱՁ) կամ իրավաբանական անձանց համար

1.1 Ընդհանուր նկարագիր

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ կարող են համարվել անհատ ձեռնարկատերերը (ԱՁ), սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (ՍՊԸ) կամ այլ ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, եթե.

1. նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով ապրանքների կամ ծառայությունների իրացումից հասույթը չի գերազանցել 24 մլն. դրամը,

2. չեն մատուցում խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, ինժեներական, գովազդային, դիզայներական, մարկետինգային, թարգմանչական, փորձագիտական, բժշկական, ատամատեխնիկական ծառայություններ, տեղեկատվության մշակման և փոխանցման, գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքներ, ինչպես նաև վերոնշյալ ծառայություններին համանման այլ ծառայությունների մատուցողներ,

3. չեն զբաղվում Երևան քաղաքում առևտրային գործունեությամբ (առք և վաճառք) կամ Երևանից դուրս գտնվող առևտրային կենտրոններում[1] առևտրական գործունեությամբ (առք և վաճառքով)[2],

4. Երևանի վարչական սահմանների մեջ չեն ծավալում հանրային սննդի ոլորտում գործունեություն

---

[1] Առք և վաճառք ասելով նկատի ունենք X ապրանքի առքը և նույնությամբ վաճառքը: Երևանում կամ Երևանից դուրս գտնվող առևտրային կենտրոնների տաղավարում (օրինակ, Առինջ Մոլում) առք ու վաճառքի դեպքում միկրոձեռնարկատիրության սուբյեկտ չեք կարող համարվել: Բայց եթե X ապրանքը գնել և վաճառում եք Երևանից դուրս գտնվող Ձեր խանութում, որը որևէ առևտրային կենտրոնում տաղավար չի, ապա կարող եք համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ:
Մյուս կողմից, եթե, օրինակ, Դուք գնում եք թել և ուլունքներ, դրանցից սարքում եք ապարանջան և վաճառում, կամ գնում եք միրգ, չիր սարքում և վաճառում, դա չի համարվում առք ու վաճառք այլ արտադրություն: Այս դեպքում դուք կարող եք համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ անկախ Ձեր գործունեության վայրից:

[2] Վաճառքը պետք է իրականացվի բացառապես բնակչությանը, այլ ոչ իրավաբանական կազմակերպություններին:

5. համատեղ գործունեության պայմանագրի, ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ չեն[3],

6. չեն կատարել հարկային տարվա ընթացքում ՀԴՄ շահագործման կանոնների երրորդ խախտում[4]

7. ռեզիդենտ առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) չի պատկանում այլ ռեզիդենտ առևտրային կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին[5],

8. ռեզիդենտ առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) չի պատկանում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է այլ ռեզիդենտ առևտրային կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին կանոնադրական կապիտալի 20% և ավելի բաժնեմասը[6],

9. օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա՝ ելնելով հարկային օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասից

---

[3] Օրինակ, ենթադրենք Ա ընկերությունը Բ ընկերության հետ կնքել է համատեղ գործունեության պայմանագիր, ըստ որի Ա ընկերությունը զբաղվում է թեյի արտադրությամբ, իսկ Բ ընկերությունը զբավում է թեյի փաթեթավորվմամբ, բրենդինգով և վաճառքով: Այս պարագայում Ա և Բ ընկերությունները չեն կարող համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ:

[4] Միշտ պետք է տպել ՀԴՄ կտրոնը, երեք խախտման դեպքում այլևս հնարավորություն չեք ունենա միկրոձեռնարկատիրության հարկային համակարգի ներքո աշխատելու և ազատվելու բոլոր բիզնես հարկերից:

[5] Ենթադրենք դուք գրանցել եք Արամ Կարապետյան ԱՁ, միևնույն պահին Ձեր ընկերների հետ բացել եք Փայտ ՍՊԸ-ն, որտեղ ունեք ընկերության 35%: Այս պարագայում ո'չ Արամ Կարապետյան ԱՁ-ն, ոչ Փայտ ՍՊԸ-ն չեն կարող լինել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ: Կարևոր է նշել, որ եթե Արամ Կարապետյան ԱՁ-ն հարկային մարմին ներկայացնի գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն, ապա Փայտ ՍՊԸ-ն կարող է համարվել միկրոձեռնարկատիորության սուբյեկտ հայտարարության ներկայացման հաջորդ օրվանից: Նույնը սկզբունքը կկիրառվի Արամ Կարապետյան ԱՁ-ի հանդեպ, Փայտ ՍՊԸի գործունեության դադարեցման դեպքում:

[6] Ենթադրենք Սերգեյ Արամյանը ունի 30% բաժնեմաս Շինտեկ ընկերությունում և 40% բաժնեմաս Պռոևայֆ ընկերությունում,, ապա այս դեպքում ո'չ Շինտեկը, ո'չ Պռոևայֆը չեն կարող համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ: Վերջինս հնարավոր կլինի միայն եթե ընկերություններից որևէ մեկը հարկային մարմին ներկայացնի գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն:

փոխկապակցված կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց իրացման շրջանառությունների հանրագումարը չի գերազանցել (գերազանցում) 24 միլիոն դրամը,

10. Չեն գործում, որպես բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, ներդրումային ընկերություններ, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներ, գրավատներ, արտարժույթի առք և վաճառքի, դիլերային-բրոկերային գործունեություն իրականացնողներ, ներդրումային ֆոնդեր, ֆոնդերի կառավարիչներ, վճարահաշվարկային կազմակերպություններ, նոտարներ, խաղատների շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեության իրականացնողներ:

1.2 Հարկային պարտավորություններ

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները ազատվում[7] են ՀՀ բյուջե վճարման ենթակա պետական հարկերից: Ավելի մանրամասն հարկերի և վճարների աղյուսակը բերված է ստորև.

	Ավելացված արժեքի հարկ	Շահութահարկ	Եկամտային հարկ[8]	Ակցիզային հարկ
ՍՊԸ/ ՓԲԸ/Բ ԲԸ	Ազատված է[9]	Ազատված է	Վարձու աշխատող ունենալու դեպքում՝ ամսական 5000 դրամ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար	Ակցիզային հարկով հարկման ենթակա կլինեք, եթե զբաղվում եք էթիլային սպիրտի (բացառությամբ կոնյակի սպիրտի), սպիրտային խմիչքների, գարեջրի, գինու,

[7] Տե'ս աղյուսակը: Հարկ է նշել, որ միկրոձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում օրենսգրքով սահմանված կարգով բնապահպանական հարկի և (կամ) ճանապարհային հարկի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից:

Եթե միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող ԱՁՆ կամ ընկերությունը համարվում է ակցիզային հարկ վճարող, ապա չի ազատվում նաև ակցիզային հարկ վճարելու պարտավորությունից: Ակցիզային հարկով հարկման ենթակա են էթիլային սպիրտի (բացառությամբ կոնյակի սպիրտի), սպիրտային խմիչքների, գարեջրի, գինու, ծխախոտի (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները), քսայուղի, բենզինի, դիզելային վառելիքի, հում նավթի, նավթամթերքների, նավթային գազերի, սեղմված բնական գազի արտադրությունը և/կամ ներմուծումը

[8] Եկամտային հարկը վերաբերում է ոչ թե բիզնեսին, այլ այդ բիզնեսում ներգրավված աշխատողներին: Տնտեսվարողը, որպես հարկային գործակալ, պարտավոր է հաշվարկել և վճարել իր աշխատողների եկամտային հարկը:

[9]Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում՝ ՀՀ ներմուծվող ապրանքների մասով օրենսգրքով սահմանված կարգով ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից

ԱՁ	Ազատված է	Ազատված է	Վարձու աշխատող (այդ թվում անհատական ձեռնարկատերն անձամբ, եթե վերջինս գրանցված աշխատող է և ստանում է աշխատավարձ) ունենալու դեպքում՝ ամսական 5000 դրամ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար:	ծխախոտի (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները), քսայուղի, բենզինի, դիզելային վառելիքի, հում նավթի, նավթամթերքների, նավթային գազերի, սեղմված բնական գազի արտադրությամբ և/կամ ներմուծումով: Հարկի չափերը սահմանվում է ՀՀ հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածով՝ https://bit.ly/38Y2845

	Սոցիալական/կուտակային վճար	Դրոշմանիշային վճար (բանակ)
ՍՊԸ/ ՓԲԸ/Բ ԲԸ	Վարձու աշխատողի[10] < 500.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ ամսական 4.5% 500.000-1.020.000 դրամ դեպքում՝ ամսական աշխատավարձի 10%-ի ու 32.500 դրամի տարբերություն, >1.020.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 69.500 դրամ	Ամեն վարձու աշխատողի համար կախված աշխատավարձից ամսական՝ <100.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 1500 դրամ, 100.001-200.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 3000 դրամ 200.001-500.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 5500 դրամ 500.001-1.000.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 8500 դրամ >1.000.001 դրամ աշխատավարձի դեպքում՝ 15.000 դրամ
ԱՁ	Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող ԱՁ-ն իր գծով ազատված է կուտակային վճարից: Վարձու աշխատող[10] ունենալու դեպքում աշխատողի հաշվով ` < 500.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ ամսական աշխատավարձի 4.5% 500.000-1.020.000 դրամ դեպքում՝ ամսական աշխատավարձի 10%-ի ու 32.500 դրամի տարբերություն, >1.020.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 69500 դրամ	Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող ԱՁ-ն իր գծով վճարում է տարեկան 18.000 դրամ միանվագ: Վարձու աշխատող ունենալու դեպքում, ամեն վարձու աշխատողի համար կախված աշխատավարձից ամսական՝ <100.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 1500 դրամ, 100.001-200.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 3000 դրամ 200.001-500.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 5500 դրամ 500.001-1.000.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 8500 դրամ >1.000.001 դրամ աշխատավարձի դեպքում՝ 15.000 դրամ

[10] Եթե ծնվել է 1974 թվականի հունվարի 1-ից հետո: Միչև 1974 թ. հունվարի 1-ը ծնված լինելու դեպքում որևէ կուտակային վճար չի կատարվում:

Կարևոր. *ՍՊԸ բաժնետերերը ունեն պարտավորություն հայտարարագրել իրենց շահաբաժինները և վճարել 5% շահաբաժնի հարկ: Ենթադրենք ՍՊԸ բաժնեմասերը պատկանում են ձեզ և ձեր կնոջը՝ 60% և 40% հարաբերակցությամբ: Ամսվա կտրվածքով Ձեր շահույթը կազմել է 50.000 դրամ: Որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող ՍՊԸ դուք ազատված եք շահութահարկից: Սակայն, ըստ ձեր ունեցած շահաբաժնի, շահույթի 30.000 դրամ ձեզ է բաշխվում, 20.000 դրամ ձեր կնոջը: 5% շահաբաժինների հարկումը վերաբերում է հենց այս գումարներին: Որպես ֆիզիկական անձ, ձեզ անհրաժեշտ կլինի հայտարարագրել շահաբաժնից ստացված ձեր եկամտուտը և պետական բյուջե վճարել 1500 դրամ (30.000 դրամ շահաբաժնի 5%-ը), ձեր կնոջը՝ 1000 դրամ (20.000 դրամ շահաբաժնի 5%-ը): Վճարումը կատարվում է տարեկան և միայն փաստացի բաշխելու դեպքում:*

1.3 Տվյալ հարկային ռեժիմի տակ աշխատելու համար դիմումի ներկայացման կարգ

Միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի ներքո աշխատելու համար անհրաժեշտ է https://file-online.taxservice.am էլեկտրոնային համակարգի միջոցով լրացնել և հանձնել Ձեր «Անձնական էջ» բաժնի «Հաշվետվություններ» ենթաբաժնի «257. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ» հայտարարությունը: Վերջինս հարկավոր է անել գրանցումից հետո 20 օրվա ընթացքում: Եթե գրանցումից անցել է ավելին քան 20 օր, ապա տվյալ տարվա համար դուք չեք կարող համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ: Հայտարարությունը ներկայացնել պետք է նաև յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից փետրվարի 20-ը ընկած ժամանակահատվածում՝ անկախ նախկինում այդ համակարգում հաշվառված լինելու փաստից:

1.4 Հարկային հաշվետվությունների ներկայացման և հարկային պարտավորությունների կատարման ժամկետներ

Որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ Ձեզ անհրաժեշտ է հանձնել ՊԵԿ-ի էլեկտրոնային համակարգում հաշվետվություններ, որոնք առկա են https://file-online.taxservice.am համակարգի Ձեր անձնական էջի «Հաշվետվություններ» բաժնում:

Անվանում	Վերջնաժամկետ
205. Հաշվետվություն՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության վերաբերյալ[11]	Մինչև հարկային տարվա հաջորդող տարվա փետրվարի 1-ը
189. Եկամտային հարկի հաշվարկ վարձու աշխատողների համար	Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը

Եթե ակցիզային հարկ վճարող[12] եք, ապա նաև մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը պետք է հանձնեք «203. Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ» հաշվետվությունը՝ լրացնելով միայն հաշվետվության բաժին 2-ը:

Հարկային պարտավորությունների և վճարների մարումը պետք է իրականացվի հետևյալ ժամանակային գրաֆիկով.

Անվանում	Վերջնաժամկետ	Հաշվեհամար
Եկամտային հարկ	Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը	900008000490
Կենսաթոշակային կուտակային վճար		
Վարձու աշխատող ունենալու դեպքում դրոշմանիշային վճար	Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը	9000050011186

[11] Սույն հաշվետվության երկրորդ մասում պետք է լրացնեք Ձեր գործունեության տեսակի կոդը, բաժինը, հատվածը, խումբը, դասը և ենթադասը: Վերջինս հասկանալու համար անհրաժեշտ է բեռնել հետևյալ փաստաթուղթը՝ http://www.arlis.am/Annexes/4/GT30.1-13page1730-2124ink1392.doc

[12] Ակցիզային հարկով հարկման ենթակա կլինեք, եթե զբաղվում եք էթիլային սպիրտի (բացառությամբ կոնյակի սպիրտի), սպիրտային խմիչքների, գարեջրի, գինու, ծխախոտի (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները), քսայուղի, բենզինի, դիզելային վառելիքի, հում նավթի, նավթամթերքների, նավթային գազերի, սեղմված բնական գազի արտադրությամբ և/կամ ներմուծումով: Հարկի չափերը սահմանվում է ՀՀ հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածով՝ https://bit.ly/38Y2845

ԱՁ լինելու դեպքում նաև տարեկան 18.000 դրամ դրոշմանիշային վճար:	Մինչև հարկային տարվա հաջորդող տարվա փետրվարի 1-ը	

Ակցիզային հարկ վճարող լինելու դեպքում, ակցիզային հարկի գումարների վճարումը իրականացվում է ըստ գործարքի տեսակի և ապրանքատեսակի՝

Հարկման բազա	Հաշվեհամար
ՀՀ-ում արտադրվող գարեջուր	900005003026
ՀՀ-ում արտադրվող հաղողի և այլ գինիներ	900005003166
ՀՀ-ում արտադրվող փրփրուն գինիներ և գինենյութեր	900005003174
ՀՀ-ում արտադրվող վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրատներ	900005003182
ՀՀ-ում արտադրվող ղ խմորման ենթարկվող այլ ըմպելիքներ (խնձորի սիդր,պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք)	900005003190
ՀՀ-ում արտադրվող էթիլենային սպիրտ	900005003208
ՀՀ-ում արտադրվող սպիրտային խմիչքներ	900005003216
ՀՀ-ում արտադրվող խաղողի գինու թորումից ստացվող թրմեր, կոնյակ	900005003224
ՀՀ-ում արտադրվող օղի	900005003232
ՀՀ-ում արտադրվող լիկյորներ, մրգօղիներ	900005003240
ՀՀ-ում արտադրվող շամպայն	900005032819
ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	900005003257
ՀՀ-ում արտադրվող շարժիչային յուղեր	900005032918
ՀՀ-ում արտադրվող այլ ակցիզային ապրանքներ	900005003018
ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքներ	900008000490
ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ներմուծվող ապրանքներ	Ճշտվում է մաքսային մարմնում ապրանքների ներմուծման ժամանակ